



ԵՐԿՈՒՇԱՔԹԻ, 9 ՄԱՅԻՍ, 2022

### ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՊՈԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, Կուր ինձ իմաստութիւն վարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեալս զիս. եւ ողորմեալ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

## ՍԱՂՄՈՍ 6

ՆԵՂՈՒԹԵԱՆ ՄԷՋ ՕԳՆՈՒԹԵԱՆ ԱՂՕԹՔ

**Տ**էր, վայրոյթիդ մէջ մի յանդիմաներ զիս,  
բարկութեանդ մէջ մի պատժեր զիս:  
Ողորմէ ինձի, Տէր, տկար եմ ես.  
Բժշկէ զիս, որովհետեւ մինչեւ ոսկորներս կը դողամ:  
Հոգիս ծանր խռովքի մէջ է. մինչեւ ե՞րբ, Տէր:  
Դարձիր, Տէր, եւ փրկէ զիս.  
Ապարէ զիս մահուընէն, որովհետեւ ողորմած ես:  
Որովհետեւ մահուան մէջ ո՞վ շնորհակալութիւն պիտի յայտնէ քեզի:  
Հեծեծելէն յոգնեցայ, ամէն գիշեր ես լացով լուացի իմ մահիճս,  
եւ իմ արցունքներովս թրջեցի անկողինս:  
Աչքս մաշեցաւ ողբալէն, տկարացաւ նեղութիւններս:  
Հեռացէք ինձմէ դուք բոլորդ,  
որ անիրաւութիւն կը գործէք,  
որովհետեւ Տէրը լսեց իմ աղօթքս, եւ խնդրանքս ընդունեց:  
Թող ամչնան ու սարսափի մարտունի բոլոր թշնամիներս,  
ամօթով մնան եւ իսկոյն հեռանան:

### ՇԱՐԱԿԱՆ- ԱՊՈԹՔ

*Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:  
Ամենատարբ Երրորդութիւն, տուր աշխարհիս խաղաղութիւն:  
Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցէրոց արքայութիւն:  
Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւէն ես նեղէրոց:  
Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:*

*Պահապան ամենայնի Զրիստոս,  
այք քո հովանի լիցի ի վերայ իմ ի քուէ եւ ի գիշերի,  
ի նստիլ ի տան, ի գնալ ի ճանապարհ,  
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.  
եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:*

# ՕՐՈՒԿՆ ՆԻԹԹԸ



ԱՌԱԿԱՅ 28 եւ 29 ԳԼՈՒԽ

## ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ 28:23-28, 29:1-5

Շարունակենք: 23 հմրը կը ներկայացնէ երկու իրավիճակ. յանդիմանութիւն եւ շողոքորթութիւն: «Մարդ յանդիմանողը աւարտին շնորհք պիտի գտնէ, քան շողոքորթութիւն ընողը»: Նախ ըսենք, որ յանդիմանութիւնը յօգուտ անձին, Կեղին, շինիչ: Երկրորդ, յանդիմանութիւնը շատ ալ հաճելի եւ ընդունելի երեւոյթ մը չէ, բայց եթէ Կեղին եւ ճիշդ ձեռով Կեղի ունենայ, ապա յանդիմանողը աւարտին շնորհք պիտի գտնէ, քան շողոքորթութիւն ընողը, որովհետեւ յանդիմանութեան ժամանակ զինք հրաւիրելու սրբագրութեան, մինչ շողոքորթութեան պարագային սխալը թաքցնելու եւ անձը այդ սխալին մէջ պահելու:

24 հմրը կը յիշեցնէ, կը սրովեցնէ ըսելով. «Ան որ իր հայրն ու մայրը կը կողոպտողը, ու կ'ըսէ. յանցանք չէ, անիկա ընկերն է ապականած մարդուն»: Գիտէք, յաճախ երբ փոքր մը մէջ կայ այն վիճակը որ ամէն ինչ հասարակաց է, եւ կամ աւարտին արդէն իմս է, այդ հոգեբանութեամբ նաեւ կրնանք մեղքի մէջ իյնալ, որովհետեւ վերջ ի վերջոյ արարքը գողութիւն ընելն է, հոգ չէ թէ ծնողներս են: Ուրեմն այդպիսին համահասար է այն մարդուն որ ապականող է:

25 հմրը հպարտութեան եւ խոնարհութեան մասին է: Այն անձը որ հպարտ է, այդպիսին կռիւ կը հանէ, որովհետեւ նախ իր անձին վարահութիւնը ունի, կ'ուզէ ամէն կեդրոնացում իր վրայ ըլլալ, եւ յանկարծ եթէ չստացուի, կը սկսի բորբոքիլ: Իսկ այն անձը որ Աստուծոյ կ'ապաւինի, նախ այդպիսին խոնարհ է, եւ յաջողութիւն պիտի գտնէ: Քրիստոս պիտի ըսէ. «Այն անձը որ ինքզինք կը բարձրացնէ, պիտի խոնարհի, իսկ այն անձը որ ինքզինք կը խոնարհեցնէ՝ պիտի բարձրանայ»: Շարունակելով միտքը, 26 հմրը կ'ըսէ. «Իր սրտին ապաւինողը անմիտ է, բայց իմաստութեամբ քալողը պիտի ազարի»: Ինչպէս ասկէ առաջ ալ ըսուեցաւ, սիրտը ըսելով կը հասկնանք մարդու խորհուրդները, միտքը, անոր կեդրոնացումը: Ուրեմն, եթէ երբեք կ'ապաւինիմ ես իմ խոհուրդներուս, մտածումներուս, ծրագիրներուս, ապա անմիտ եմ, որովհետեւ մտածումներս խախտուի են: Զգուշ, չըսեր մի մտածեր, մի ծրագրեր, այլ՝ անոր ապաւինիլ: Ընդհակառակը, եթէ մտածենք ու ծրագրենք, սակայն, այդ բոլորը աստուածային իմաստութեամբ, ապա աւարտին պիտի ազարինք: Յաճախ պարասխաներ կ'ուզենք ունենալ, եւ ամէն բանէ առաջ որու կը դիմենք, մեր մտքին, մտածումներուն, խորհուրդներուն, կրնանք ունենալ պարասխան մը, սակայն որքանով այդ պարասխանը կրնայ օգտակար դառնալ: Ընդհակառակը, երբ այդ բոլորին համար Աստուծոյ իմաստութիւնը կը խնդրենք, ապա այն արեւն մեզ կ'ազարտէ մեր այդ վիճակէն: Հերաքրքրական է որ այս հատումը կը յիշեցնէ Քրիստոսի առակը որ պարսեց թէ երկու հոգիներ փուն շինեցին: Ով որ իմ այս խօսքերս կը լսէ ու կը գործադրէ, այսինքն՝ այս խօսքերուն կ'ապաւինի, այս խօսքերով կ'առաջնորդուի, կը նմանի իմաստուն մարդուն որ իր փունը ժայռի վրայ շինեց: Իսկ ով որ կը լսէ, բայց չի գործադրեր, կը նմանի այն անմիտ մարդուն որ իր փունը աւազի վրայ շինեց:

27 հմրը կը յիշեցնէ ողորմութիւն ընելու մասին: Առիթով մը վանական մը կը հարցնէ վանահօր, այսինչ մարդու մասին, թէ ինչ հարուստ է: Վանահայրը կը պարասխանը, այդ մարտը հարուստ չէ, հարուստ է այն մարդը որ փայ գիտէ: Պօղոս Առաքեալ նոյնը կ'արտայայտուի, աւելի աղէկ է փայլը քան առնելը: Ահա այս ձեռով նաեւ Աստուած ուզեց որ իր ժողովուրդը դաստիարակուի, երբ Եգիպտոսէն դուրս բերաւ, ըսելով. երբ խոստացուած երկիր մտնես, հոն պիտի հանդիպիս որքին ու որբեւայրիին, որպէսզի դուն անոնց հոգ փանիս: Բ Օրինաց 15:7-11:

28 հմրը կը յիշեցնէ, որ եթէ ամբարիշտները բարձրանան, այսինքն՝ իշխանութեան հասնին, մարդիկ պիտի պահուին, որովհետեւ ամբարիշտը իր անողորմաբար պիտի իշխէ: Խաղաղութիւնն ու ազատութիւնը պիտի վերնայ: Բայց երբ անոնք կորսուին, արդարները կը շարնան: Ահա այն արեւն մարդիկ որոնք պահուած էին, դուրս պիտի գան, խաղաղութիւնն ու ազատութիւնը երբ պիտի վերագտնեն: Թագաւորաց գիրքերը այդ պարկերը կը ներկայացնեն: Ամէն անգամ երբ աստուածահաճոյ, աստուածավախ թագաւոր մը կը նստէր գահին երկիրը ինչպիսի վիճակ կ'ունենար: Երբ Աստուծոյ կամքին հակառակ թագաւոր մը կը նստէր գահին երկրին վիճակը ինչպիսին կ'ըլլար:

29րդ գլուխ. 1 հմր: Աստուածաշունչը երբ կ'ակնարկէ խաղաղարանոց արտայայտութիւնը ըսել կ'ուզէ յամար, Աստուծոյ կամքին հակառակ գացող: Ուրեմն այդպիսին երբ կը յանդիմանուի, ու մտիկ չըներ, այդ ընդհակառակը իր սիրտը աւելի կը խստացնէ, այդպիսին յանկարծ պիտի կորուի եւ բժշկութիւն պիտի չգտնէ: Փոխանակ ակննջ փալու փրկուած խրատին ու յանդիմանութեան: Այսպիսիները մերժելով Աստուծոյ ողորմութիւնը: Այսինքն՝ այդ յանդիմանութիւնը առնելու որպէս Աստուծոյ

ողորմության արքայայությունը իբրև նշան ապաշխարության: Փոխանակ անդրադառնալու եւ վերադառնալու առ Աստուած:

2րդ համարը նոյն միտքին փարբեր մէկ արքայայությունն է. «Եթէ արդարները զօրանան, ժողովուրդը կ'ուրախանայ», որովհետեւ արդարները իրենց հետ արդարություն է որ կը բերեն: Մինչ ամբարիշտները եթէ իշխանութեան գլուխ անցնին, ժողովուրդը կը հեծէ:

3րդ համարը արդէն քանի երորդ անգամն է որ կ'արքայայտուի ըսելով, թէ ծնողքի մը հպարտությունը, ուրախությունը, հարստությունը իր գաւկին, կամ գաւակներուն առաքինի ըլլալն է: Եւ այդ գաւակը կամ գաւակները իմաստութեամբ կ'ապրին իրենց կեանքը, ապա այդպիսիները իրենց ծնողներուն համար ուրախություն են, մինչ այն գաւակը կամ գաւակները, որոնք ոչ թէ իմաստութեամբ չեն ապրիր, այլ նաեւ պոռնիկներուն ընկեր կը դառնան, այդպիսիները իրենց սպացուածքը կը վաբնեն, այնպէս ինչպէս որ էր պարագան անառակ որդիին, որ իր ամբողջ ունեցածը պոռնիկներուն վրայ ծախսեց ու աղքատացած փուն վերադարձաւ:

4րդ համարը արդար թագաւորին կամ կաշառք վերցնող թագաւորին մասին է, որ ըստ այնմ իւրաքանչիւրը իր արդիւնքը պիտի ունենայ, մէկու պարագային երկիրը հաստատուն պահելու, իսկ միւսի պարագային երկիրը կործանելու: Այսինքն՝ արդար թագաւորը կը մտածէ երկրի բարոյութեան մասին, մինչ կաշառք վեցնողը կը մտածէ իր գրպանին մասին:

5րդ համարը կը զգուշացնէ եւ կը սրովեցնէ, որ շողոքորթութիւնը լաւ չէ, ու մանաւանդ՝ բարիք մը չէ, ընդհակառակը՝ ընկերոջ շողոքորթութիւն ընողը անոր քայլերուն որոգայթ կը լարէ: Պատճառ կ'ըլլայ անոր կործանումին: